# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ՀՀ ՊԵԿ աշխատակիցների Կորեայի Հանրապետություն գործուղման արդյունքների վերաբերյալ

**1. Անունը, ազգանունը՝**

Արմեն Հարությունյան

**2. Զբաղեցրած պաշտոնը՝**

ՀՀ ՊԵԿ Հարավային մաքսատուն-վարչության Մեղրիի մաքսային կետ-բաժնի պետ

**3. Գործուղման վայրը և ժամկետները՝**

Քաղաք Սեուլ, 2023թ. օգոստոսի 8-ից 18-ը

**4. Հրավիրող կողմը՝**

Կորեայի Հանրապետության մաքսային ծառայություն

**5. Գործուղման նպատակը /աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը/՝**

ՀՀ մաքսային ծառայության արդիականացման նախագծի շրջանակներում ՀՀ ՊԵԿ թվով տասը պաշտոնատար անձանց այց Կորեայի Հանրապետություն խորհրդատվական թիմի աշխատանքներին ծանոթացման և Կորեայի մաքսային ծառայության փորձի ուսումնասիրման նպատակով

**6. Քննարկված թեմաները՝**

Այցի շրջանակներում խորհրդատվական թիմի կողմից ներկայացվել է իրականացված աշխատանքը՝ ՀՀ ՊԵԿ գործընթացների և համակարգերի ուսումնասիրման մասով, ներկայացվել են նաև տեսական նյութեր մաքսային ոլորտի, Կորեայի Հանրապետության մաքսային ծառայության փորձի և կիրառվող համակարգերի վերաբերյալ: ՀՀ ՊԵԿ պաշտոնատար անձինք մասնակցել են քննարկումներին՝ ներկայացնելով ՀՀ ՊԵԿ համապատասխան փորձը:

**7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

Կորեայի Հանրապետություն կատարած այցի ժամանակ հրավիրող կողմի կողմից իրականացվեցին մի շարք շնորհանդեսներ և մի քանի այց մաքսային մարմնի տարբեր ստորաբաժանումներ, որտեղ համապատասխան պաշտոնատար անձանց կողմից ներկայացվեցին տեղեկություններ և իրականացվեցին փորձնական դիտարկումներ, մասնավորապես.

- Օդանավակայանում տեղակայված՝ Կորեայի Հանրապետության մաքսային ծառայության API վերլուծական կենտրոնում ներկայացվեց հակիրճ շնորհանդես Կորեայի Հանրապետության մաքսային ծառայության օդային սահմանային անցումային կետերում ներդրված համակարգի վերաբերյալ, որով իրականացվում է ստացվող API/PNR տվյալների վերլուծությունը: Այն հիմնականում կիրառվում է թմրամիջոցներ տեղափոխող, անօրինական միգրացիայի և այլ իրավախախտ անձանց հայտնաբերելու նպատակով: Իրականցվում է համակարգի միջոցով ստացվող 21 անուն տվյալների վերլուծություն՝ ուղևորների միջև փոխկապակցվածությունների դուրս բերման, կամ նախկին տվյալների հետ համադրության նպատակով:

  Հսկողությունն իրականացվում է մշտադիտարկում իրականացնող աշխատակիցների կողմից, որոնք գտնվում են ուղղակի կապի մեջ ուղևորների սպասարկման սրահներում ծառայություն իրականացնող մաքսային մարմնի պաշտոնատար անձանց հետ՝ ուղղորդելով նրանց գործողությունները:

  Համակարգը բաղկացած է երկու բաղադրիչից միջազգային փոխանակման միջոցով տվյալների ստացման (որը տեղակայված է այն տրամադրող ընկերության տիրույթում) և դրանց վերլուծության համակարգից, որը կիրառվում է կենտրոնում:

- Փոստային առաքանիների նկատմամբ հսկողությունն իրականացվում է դրա համար նախատեսված բեռնային համալիրում: Բեռնային համալիրը միասնական է բոլոր փոխադրողների համար, ուր ինքնաթիռները սպասարկող օդային անգարները գտնվում են անմիջապես համալիրին կից: Համալիրում առկա է առաքանիների սորտավորման ավտոմատացված հոսքագից միաժամանկյա 20 և ավել մուտքերով, որոնցից յուրաքանչյուրը կահավորված է ռենգեն հսկողության համակարգով:

  Ռենգեն պատկերների հսկողությունը՝ իրական ժամանակում, իրականացվում է առանձնացված համակարգչային հագեցված գրասենյակային տարածքում: Այդպիսի աշխատասենյակներից մեկում 25 աշխատակից առաքանու՝ 3 տարբեր հարթություններում կատարված ռենգեն պատկերները համադրում էին առաքանու շուրիխ կոդի սկանավորման և փոխադրողի կողմից ներկայացված տվյալների հետ և որոշում առաքանու հսկողության եղանակը: Այդ աշխատակիցներն

անհրաժեշտության դեպքում համապատասխան առաքանին հոսքագծից ինքնաշխատ ուղղում էին խորը զննման:

Առաքանիների հայտարարագրումն իրականացվում է 3 մակարդակով՝ պարզեցված հայտարարագիր, միջին հայտարարգիր և ամբողջական տվյալներով հայտարարգիրը: Տարանջատումը հիմնված է առաքանու հայտարարագրված արժեքի վրա:

- Հայտարարագրման համակարգն (UNI-PASS) իր ֆունկցիոնալով կրկնում է ՀՀ մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգը: Սակայն թվով 140 խոշոր կազմակերպություններ կամ միջնորդական ծառայություններ մատուցող ընկերություններ, ունեն իրենց սեփական հայտարարագրման համակարգերը, որոնք ինտեգրված են UNI-PASS համակարգի հետ: Հայտարարագրերի նախնական ձևավորումն իրականացվում է այդ համակարգերում և միայն ամբողջական լրացված հայտարարագիրն է փոխանցվում UNI-PASS համակարգ, որտեղ անցնում է հետագա մշակումը: Իրականացվում է ընթացքի և կարգավիճակների վերաբերյալ հետադարձ կապի ապահովում:

  Ռիսկերի կառավարման բաղադրիչը չի ցուցադրվել, սակայն համաձայն նկարագրության՝ գործում է «ՀՀ արտաքին առևտրի ազգային մեկ պատուհան» համակարգի «Ռիսկերի կառավարման համակարգի» սկզբունքով: Վերլուծական և թիրախավորման բաղադրիչների միջև որևէ կապ առկա չէ:

- Կորեայի մաքսային մարմնի կառուցվածքում առկա են հետևյալ 3 ստորաբաժանումները, որոնք իրականացնում են ռիսկերի հսկողություն և վերլուծություն՝ ռիսկերի կառավարման ստորաբաժանում, տվյալների վերլուծության ստորաբաժանում (Big Data Analysis), այդ թվում՝ մեքենայացված ուսուցման և արհեստական բանականության գործիքակազմի կիրառության մասով, ինչպես նաև առանձին գործով մաքսային արժեքի ստորաբաժանում:

  Վերլուծական հարթակում (Big Data Portal), որը ներդրվել է 2020 թվականին, 2022 թվականի արդյունքներով ներդված են թվով 24 մեքենայական ուսուցման մոդելներ, որոնք ներկայումս գործում են, մի շարք մոդելներ գտնվում են մշակման փուլում, և ակնկալվում է, որ եկող տարվա սկզբին գործող մոդելների թիվը կլինի 30: Հարթակի հասանելիությունը տրամադրվում է համապատասխան պաշտոնատար անձանց

աշխատանքում կիրառման նպատակով, այդ թվում՝ այն տրամադրված է մաքսային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձանց, որոնք հսկողության ընթացքում անհրաժեշտության դեպքում հայտարարագրման համակարգում գործող ռիսկերի կառավարման մոդուլին ի լրումն օգտագործում են այս հարթակը՝ հնարավոր լրացուցիչ ռիսկեր հայտնաբերելու նպատակով: Որևէ կապ այս երկու հարթակների միջև առկա չէ՝ ոչ ինքնաշխատ, ոչ էլ մարդկանց կողմից վերլուծության արդյունքներով համապատասխան ցուցիչների՝ ռիսկերի կառավարման համակարգ մուտքագրելու միջոցով: Տվյալների վերլուծության կամ մեքենայական ուսուցման միջոցով ստացված արդյունքների հիման վրա չի իրականացվում ինքնաշխատ ռիսկի պրոֆիլների ձևավորում:

Կորեայի մաքսային ծառայությունն անց է կացնում 33 շաբաթ տևողությամբ դասընթացներ՝ մեծ ծավալի տվյալների վերլուծության մասով, որի արդյունքում հաջող հաղթահարած մասնակիցներից կատարվում է ընտրություն հետագա ստաժավորում անցնելու և մաքսային ծառայությունում՝ որպես վերլուծաբաններ աշխատանքի ընդունելու նպատակով: Ներկայումս աշխատում է այդպիսի 100 պաշտոնատար անձ, որոնցից 10-ը կենտրոնացված վերլուծական ստորաբաժանումում, իսկ մյուսները՝ այլ ստորաբաժանումներում, որտեղ իրականացնում են այդ ստորաբաժանման գործունեության շրջանակներում տվյալների վերլուծություն: Եվս 10 վերլուծաբան կապալառու ընկերությունից աշխատում է բացառապես այս հարթակի մոդելների մշակման վրա:

- Ներդրված է նաև մաքսային մարմնի կողմից շահագործվող համակարգերի սպասարկում իրականացնող կազմակերպությունների հետ աշխատանքի հետաքրքիր մոդել: Մոդելի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ Կորեայի մաքսային մարմնում, մաքսային հայտարարագրման համակարգի սպասարկման ստորաբաժանումը կազմված է 300 հոգուց, որից 30-ը հանդիսանում են բուն մաքսային մարմնի պատասխանատու պաշտոնատար անձինք, մյուս աշխատակիցները հանդիսանում են կապալառու կազմակերպության աշխատակիցներ: Առանձնահատկությունը կայանում է նրանում, որ կապալառուի աշխատակիցները գտնվում են պաշտոնատար անձանց հետ միևնույն տարածքում, նախագծերի քննարկումներն ու վերլուծությունները կատարվում են համատեղ,

իրականացվում է անմիջական հսկողություն կատարվող աշխատանքների ծավալի, մատուցված ժամանակի և արդյունքի նկատմամբ:

Բոլոր աշխատանքներն իրականացվում են մաքսային մարմնի կողմից տրամադրված տեխնիկական սարքավորումների, տեղեկատվական միջավայրերի և թեստային սարքավորումների վրա, ուստի բացակայում է նաև ծրագրային կոդերի փոխանցման, դրանց լրացուցիչ կարգաբերումների և նմանատիպ այլ խնդիրների բերող աշխատանքների անհրաժեշտության:

**8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝**

Նախագծի շրջանակներում պլանավորված հաջորդ փուլը լինելու է խորհրդատվական թիմի հերթական այցը Հայաստան՝ 2023 թվականի նոյեմբերին:

**9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝**

Նոյեմբերին իրականացվելիք այցի շրջանակներում խորհրդատվական թիմը ներկայացնելու է վերջնական հաշվետվությունը և առաջարկները:

Թեև այցի ընթացքում սույն հարցերին հնարավոր եղավ ծանոթանալ ոչ այն խորությամբ, որը հնարավորություն կտար այն անմիջապես տեղայնացնել ՀՀ ՊԵԿ ստորաբաժանումներում, սակայն առկա են մի շարք մոդելներ, տրամաբանություններ, որոնք հնարավոր է որոշակի համապատասխանեցումից հետո տեղայնացնել և ստանալ բավարար արդյունք:

**10. Ստորագրություն՝**

Արմեն Հարությունյան

**Ամսաթիվ՝** 23.08.2023թ.